

*ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ՝ Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻՆ*

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

*ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԻ ԵՎ ՀԳՄ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
2018Թ. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

ՏԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ

Հաշվետու ժամանակահատվածում տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժինն իր աշխատանքային ծրագրին համապատասխան նախապատրաստել և կազմակերպել է մարզպետի կողմից հրավիրված մարզխորհրդի նիստերը, որոնց մասնակցելու համար ժամանակին տեղեկացվել են մարզի բոլոր համայնքների ղեկավարները, քննարկված հարցերին առնչվող մարզային և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները:

Բաժինը կազմակերպել է նաև մարզպետի, մարզպետի տեղակալների և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի մոտ հրավիրված խորհրդակցությունները, ապահովվել համայնքների ղեկավարների մասնակցությունը նշված խորհրդակցություններին:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի ուսումնասիրությանն ու կատարմանն է մակագրվել վերադասի որոշումներ, կարգադրություններ, հանձնարարականներ, տեղական ինքնակառավարման մարմիններից գրություններ, քաղաքացիներից դիմում - բողոքներ, որոնք ուսումնասիրվել և սահմանված կարգով և ժամկետներում կատարվել կամ պատասխանվել են:

Բաժինը մշտական կապի մեջ լինելով մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ նրանց սորամադրել է անհրաժեշտ խորհրդատվություն իրենց սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման հարցերով , ինչպես նաև

վերահսկել է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը:

Մեծ ուշադրություն է դարձվել և մշտական հսկողություն է իրականացվել մարզի համայնքների ավագանու նիստերի հրավիրման պարբերականության, ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները, համայնքի ղեկավարի կարգադրությունները սահմանված կարգով մարզպետարան ներկայացնելու նկատմամբ և դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը, ինչպես նաև համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում- բողոքներին, առաջարկություններին, քաղաքացիների ընդունելություններին և նրանց կողմից բարձրացրած հարցերին օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանելուն:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ նախագահի << Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.47 կետի պահանջներով և ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 19.01.2018թ. <<տաեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> թիվ 15-Ա հրամանով սահմանված ժամանակացույցի ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբերը 2018 թվականի ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի՝ 38 համայնքներում իրականացված են վարչական հսկողության աշխատանքներ:

Մեծ աշխատանքներ են իրականացվել համայնքային ծառայության բնագավառում:

Համայնքային ծառայությունը, համայնքապետարաններում կադրային գործի վարումը մշտապես գտնվում է բաժնի հսկողության տակ:

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան համայնքներից պատրերաբար ստացվել է ամենամսյա և կիսամյակային տեղեկությունները, որոնք անմիջապես ուղարկվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարզի համայնքների ղեկավարների կողմից համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար տրվել է թվով 80 հայտարարություններ, որից կայացել է 62 մրցույթ, հաղթող ճանաչված մասնակիցները նշանակվել են համապատասխան պաշտոններում:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում կայացել են համայնքային ծառայության պաշտոներ զբաղեցնող համայնքային ծառայողների թվով 97 ատեստավորումներ:

Բաժինը հաշվետու ժամանակահատվածում կատարել է նաև մարզպետի, մարզպետի տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի և վարչության պետի կողմից տված բազմաթիվ հանձնարարականներ և հրատապ լուծում պահանջող աշխատանքներ :

Բաժնում մեծ ուշադրություն է դարձվել աշխատանքային կարգապահության հարցերին, գործնական փոխհարաբերություններ է պահպանվել մարզպետարանի աշխատակազմի մյուս ստորաբաժանումների հետ:

ՀԳՄՏՍՍ գործունեության համակարգման բաժին

Բաժինը հաշվետու ժամանակահատվածում իր աշխատանքային ծրագրի, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետի որոշումների և կարգադրությունների, մարզպետի տեղակալների, աշխատակազմի գլխավոր քարտուղարի և վարչության պետի հանձնարարականների հիման վրա իրականացրել է իր աշխատանքային գործունեությունը: Մասնակցել է մարզպետի կողմից հրավիրված մարզխորհրդի նիստերի, խորհրդակցությունների, մարզային գորակոչային հանձնաժողովի նիստերի նախապատրաստմանը և ապահովմանը, ինչպես նաև մարզպետի տեղակալների, աշխատակազմի գլխավոր քարտուղարի մոտ հրավիրված խորհրդակցությունների ապահովմանը: Համապատասխան գործադիր մարմինների մարզի տարածքում գործող կառույցներից ստացված տեղեկատվությունները, որոնք մակագրվել են բաժնին՝ մանրամասն ուսումնասիրվել և վերլուծվել են:

Բաժինը մշտապես համագործակցել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության ՀՀ Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ: Կազմել և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության <<Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա>> ենք ուղարկել ՀՀ Արմավիրի մարզի կազմակերպությունների, մարզպետարանի, համայնքների ներկայացուցիչների 2018 թվականի ունկնդիրների պլան-գրաֆիկը և մշտական հսկողություն ենք իրականացրել նրանց դասընթացների մասնակցությանը:

Արմավիրի մարզպետի որոշմամբ հաստատվել է ՀՀ Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման

հիմնական միջոցառումների պլանը և ուղարկվել Արմավիրի մարզային փրկարարական վարչություն:

Բաժնի աշխատակիցները մասնակցել են ԱԻ նախարարության կողմից կազմակերպված միջոցառումներին, քննակուրսներին, դասընթացներին և այլ գործընթացներին:

Բաժնի պետը մասնակցել է 2018թվականի սեպտեմբերի 10-13-ը կազմակերպված << Շանթ 2018>> հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը:

Բաժինը հաշվետու ժամանակահատվածում մշտապես համագործակցել և աջակցել է մարզային զինկոմիսարիատներին:

Բաժինն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել 2018 թվականի ձմեռային և ամառային զորակոչի առաջին օրվա միջոցառման ապահովմանը, որն արդեն ավանդույթ դարձած շարունակվում է վերջին 7-8 տարիներին՝ նորակոչիկները բանակ են ճանապարհվում Սարդարապատի հուշահամալիրում գոհված ազատամարտիկներին հարգանքի տուրք մատուցելով, երգ-երաժշտության ուղեկցությամբ և մարզպետի կողմից նվերներ ստանալով:

Ջորակոչային պլան-առաջադրանքները կատարվել են 100%-ով:

Բաժինը մտապես իր ուշադրության կենտրոնում է պահում մարզի երեք կազմակերպություններում այլընտրանքային ծառայություն կատարող անձանց աշխատանքային և կենցաղային պայմանների ապահովման և իրենց օրենքով սահմանված կարգով պարտականությունների կատարման ուղղությամբ:

Այլընտրանքային ծառայության վերաբերյալ հավաքվել է տեղեկատվություն մարզի երեք քաղաքներից և ներկայացվել է տարածքային կառավարման նախարարության համապատասխան հանձնաժողովին:

Բաժինը մասնակցել է մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի կազմակերպմանը և ապահովմանը, զորակոչից և հաշվառումից խուսափող զորակոչիկների հայտնաբերման գործընթացին, նախագորակոչային տարիքի պատանիների կցագրման, ռազմական ուսումնական հաստատություններում սվորել ցանկացողներով համալրմանը, մարզային զինկոմիսարիատից տեղեկատվության հավաքման ապահովմանը: Բաժնի աշխատողների մշտական ուշադրության կենտրոնում է եղել ՀՀ կառավարության 27.05.2010թ. N 657 -Ն որոշման կատարման ընթացքը, մարզի բոլոր համայնքներում և կազմակերպություններում զիմվորական հաշվառման, կազմակերպման, նաև գրանացամատյանների ճիշտ վարման ուղղությամբ:

Ակտիվ մասնակցություն ենք ունեցել մարզում անցկացված բոլոր շտաբային ուսումնավարժություններին և ապահովել ենք մասնակիցների ներկայությունը:

Բաժինը հաշվետու ժամանակամիջոցում համագործակցել և աջակցել է սահմանապահ 2037 ռուսական և մարգային տարածքում տեղակայված հայկական զինվորական զորամասերի հետ: Սահմանված ժամկետներում ուսումնասիրել և պատասխանել ենք նրանցից ստացված բոլոր գրություններին և անհրաժեշտ աջակցություն ենք ցուցաբերել նրանց:

Մշտապես ապահովել ենք զինվորական զորամասերի, մարզի գործադիր մարմինների ստորաբաժանումների փոխհարաբերությունները և կապը համայնքների հետ:

Արմավիրի մարզպետի որոշմամբ ստեղծված հանձնաժողովների կազմում բաժնի պետը մասնակցել է մարզի մի շարք համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացրած հանձնաժողովների աշխատանքներին:

Բաժինը մշտապես համագործակցում և աջակցում է մարզում գործող հասարակական-քաղաքական կազմակերպություններին հետ, հատկապես վետերանների խորհրդի և ԿԻՄ մարգային կազմակերպությունների հետ կազմակերպել է մի շարք միջոցառումներ:

Բաժինն ակտիվ մասնակցություն է ունեցել Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 73 ամյակին նվիրված տոնակատարությունների նախապատրաստման և անցկացման միջոցառումներին:

Բաժնի աշխատակիցները ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում մասնակցել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին:

Հաշվետու ժամանակամիջոցում մարզի թվով 32 քաղաքացիներից ստացվել են դիմումներ ՌԴ մուտքի թույլտվության արգելքը վերացնելու վերաբերյալ, որոնք մեր կողմից ուղարկվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն, իսկ ստացված պատասխանների և պարզաբանումների մասին տեղեկացվել են դիմումատու քաղաքացիներին:

Նշված ժամանակահատվածում կատարվել են աշխատանքային ծրագրերի մշակում, հաշվետվությունների և տեղեկանքների կազմում, ինչպես նաև ընթացիկ հրատապ լուծում պահանջվող հանձնարարականների կատարում:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝

Ա. Ղուկասյան

